

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՆԵՐ ԵՒ ՆՐԱ ԱՂՐԻԻՐՆԵՐԸ.

Կանոնական իրաւունք կոչուում է եկեղեցուց սահմանուած այն բոլոր օրէնքների ամբողջութիւնը, որով կարգաւորուում են եկեղեցական համախմբութեան երևոյթները: Այս օրէնքները պետութիւնից սահմանուած օրէնքներից տարբերելու համար եկեղեցական իրաւաբանական դրականութեան մէջ սովորաբար անուանուում են կանոն. հետևապէս կանոնը եկեղեցագիր օրէնքն է:

Եկեղեցին, իբրև հասարակական խմբակցութիւն և հաւաքական մարմին, կարիք ունի որոշ պարտագիր կարգի, որից կախուած է իւր կեանքի կանոնաւոր ընթացքը: Որպէս զի կանոնական իրաւունքը կարողանայ կատարել իւր այս կարգաւորիչ դերը՝ անհրաժեշտ է որ նա լինի հաստատելի պարզորոշ:

Կանոնական իրաւունքը պէտք է լինի հաստատ՝ այսինքն անկախ առանձին անհատների անձնական կամքից և անպայման կերպով պարտագիր նոյն եկեղեցու անդամների համար: Իւրաքանչիւր անհատի համար կանոնական իրաւունքը պիտի հանդիսանայ որպէս եկեղեցում կանոնագիր իշխանութիւն ունեցող հեղինակութիւնից սահմանուած պարտագիր հրամանների ամբողջութիւն: Կանոնագիր հեղինակութիւնից իւր իշխանութեան սահմաններում դրուած կանոնները իւրաքանչիւր անհատի համար պէտք է ստիպողական կարգի նշանակութիւն ունենան, նոյն իսկ այն դէպքում՝ երբ ինքը անհատը անհամաձայն լինի դրանց՝ իւր անձնական համոզմունքի տեսակէտից:

Իւրաքանչիւր մարդու կեանքում կայ մի շրջան, ուր միակ կանոնագիրը և հրամայողը կարող է և պէտք է լինի միայն իւր սեպհական եսը՝ իւր ներքին համոզմունքը՝ խիղճը: Կեանքի այս անհատական շրջանը կանոնական իրաւունքին չի ենթարկուում: Սակայն իւրաքանչիւր մարդու կեանքում կայ նաև մի այլ շրջան՝ արտաքին և հասարակական բնուածութիւն ունեցող, ուր այլևս չէ կարող տիրել այս կամ

այն անհատի անձնական համոզմունքը, այլ պէտք է տիրապետէ կանոնական իրաւունքը, որպէս ամբողջ հասարակութեան (եկեղեցու) համոզմունքների արտայայտութիւն և առանձին անհատների նկատմամբ՝ արտաքին և հասարակական բնաւորութիւն ունեցող հրամանների միութիւն։

Բայց այդ չէ նշանակում որ անհատի դիրքը և վերաբերմունքը դէպի կանոնը պէտք է լինի լոկ կրաւորական. ոչ Սնխոս ստրկական հնազանդութիւն չի պահանջում։ Քանի որ կանոնը կանոն է՝ իհարկէ՝ նա պէտք է կատարուի և իւրաքանչիւր դք պարտաւոր է անպայման կանոնապահ մնալ։ Բայց եկեղեցու իւրաքանչիւր գիտակից և պարտաճանաչ անդամ պարտաւոր է ոչ թէ անհոգ անտարբերութեամբ կանոնին հետևել, այլ քննողաբար վերաբերուել կանոնին, ըմբռնել նորա արդար յարմարաւոր լինելը կամ չլինելը և իւր կարողացածի չափով նպաստել կանոնների բարւոքմանը։ Իւրաքանչիւր անհատ այդ կարող է կատարել ուսումնասիրելով և քննադատելով կանոնական իրաւունքի ներկայ վիճակը, ցոյց տալով եղածի թերութիւնները և պակասութիւնները, մշակելով ցանկալի բարեփոխումների եղանակներ։ Բայց այդ դործը բարդ լինելով և ուսումնասիրողի կողմից որոշ մասնագիտական հմտութիւն և գիտական պատրաստութիւն պահանջելով՝ իւրաքանչիւր անհատից չէ կարող պահանջուիլ, որովհետև չէ կարելի ստիպել, որ ամենքը իրենց ամբողջովին նուիրեն միայն այդ զբաղմունքին, որ անհրաժեշտ է վերոյիշեալ հմտութիւնը և պատրաստութիւնը ձեռք բերելու համար։ Հետևապէս՝ կանոնական իրաւունքի լուրջ ուսումնասիրութիւնը և ձեռնհաս քննադատութիւնը մասնագէտներին թողնելով՝ իւրաքանչիւր անհատից կը պահանջուի միայն, որ նա ծանօթ լինի մասնագէտների և առհասարակ ձեռնհաս և գիտակ ուսումնասիրողների հետազոտութիւններին։ Այսքան տեսական պատրաստութիւն ձեռք բերելով և իւր սեպհական կեանքում և գործունէութեան ընթացքում գիտակից կերպով վերաբերուելով կանոնական սահմաններին՝ եկեղեցու իւրաքանչիւր անդամ կարող կը լինի որոշ

չափով նպաստել նոյն կանոնի բարւոքմանը՝ գոնեա իւր գործնական գիտողութիւններով:

Այս տեսակ գործնական գիտողութիւնները և սոցա ու տեսական խորհրդածութիւնների վրայ հիմնուած քննադատութիւնները կարող են եղած կանոնի պակասաւորութիւնը ցոյց տալով՝ ճանապարհ բանալ նոր և լաւագոյն կանոնի պատշաճաւոր եղանակով առաջանալուն: Այս կերպ անհատը ներգործող գեր կըկատարէ այն կանոնի նկատմամբ, որին նա պարտաւոր է անպայման կերպով հնազանդիլ:

Յամենայն դէպս ամեն մի անհատ պիտի այն գիտակցութեանը լինի, որ իւր եկեղեցական կեանքի և գործունէութեան համար պէտք է պարտադիր ղեկավար ընդունէ իրենից անկախ և իրենից բարձր կանգնած կանոնադիր իշխանութիւնից գրուած կանոնները:

Մեր եկեղեցում կանոնադիր իշխանութիւն ունեցող համարւում են հետեւեալ հեղինակութիւնները, որ եկեղեցական իրաւաբանութեան մէջ կանոնական իրաւունքի աղբիւրներ, «կանոնադիր» կամ «կանոնադիր աղբիւր» են կոչւում: Նախ՝ Քրիստոսը, որի բարոյական վարդապետութիւնը քրիստոնէական եկեղեցու բարձրագոյն և անփոփոխ առաջնորդողը պիտի լինի: Եկեղեցու ամբողջ կեանքը իւր բոլոր մասնակի երևոյթներով, իւր ամբողջ էութեամբ, պէտք է աշխատի քրիստոնէական-բարոյական սկզբունքների իրականացում լինել, — հետեւապէս՝ առնուազն չըհակասէ այդ սկզբունքներին: Իւրաքանչիւր հակասութիւն մի ապացոյց կըլինի, որ քրիստոնէական եկեղեցին շեղուել է իւր էական հիմունքներից, որոնց վերայ հաստատուն կանգնած պիտի լինի քրիստոնէական եկեղեցու շէնքը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Քրիստոսի քարոզի սկզբունքները միշտ պարտադիր պիտի մնան քրիստոնէական եկեղեցու գոյութեան ընթացքում և չպիտի կարողանան վերացուել ոչ մի իշխանութեան ձեռքով, որովհետեւ քրիստոնէութեան սկզբունքները մերժելով՝ եկեղեցին կըզրկուի «քրիստոնէական» անուանուելու իրաւունքից: Այս պատճառով եկեղեցական

իրաւարանութեան մէջ քրիստոսադիր կանոնական սկզբունքներին աստուածային կամ «աստուածադիր իրաւունքի» յատուկ անունն է յատկացուած: Կանոնադիր հեղինակութիւն ընծայուած է եկեղեցու կողմից նաև առաքեալներին, որոնք քարոզելով և տարածելով երկնաւոր վարդապետի խօսքերը՝ նորակազմ քրիստոնէական համայնքներին բարեկարգութեան և կարգապահութեան կանոններ էին տալիս:

Կանոնադիր իշխանութիւն ունեցող ընդունուած են նաև եկեղեցական ժողովները, որոնք լինում են զանազան տեսակի. այսպէս՝ տիեզերական—բոլոր քրիստոնէայ եկեղեցիների ներկայացուցիչներից կազմուած և բոլոր քրիստոնէայ եկեղեցիների համար պարտադիր կանոններ հրատարակող ժողով, որի գործունէութիւնը սկսւում է չորրորդ դարի առաջին կիսից և հետզհետէ սահմանափակւում է առանձին եկեղեցիների առանձնացած գոյութեան պատճառով: Մեր եկեղեցին տիեզերական համարող ժողովներից, ինչպէս յայտնի է, ընդունում է Նիկիականը (325 թ.), Կոստանդինուպօլսինը (381) և Նիքեոսինը (431):

Այնուհետև՝ եկեղեցական ժողովները լինում են՝ տեղական — մի որոշ «ինքնագլուխ» և անկախ եկեղեցու ներկայացուցիչներից գումարուած և նոյն եկեղեցու սահմաններում պարտադիր համարող կանոններ գնող ժողով: Այս տեղական ժողովները կոչւում են նաև աղգային-եկեղեցական, երբ այդ եկեղեցին գլխաւորապէս մի որոշ ազգութեան պատկանող անհատներից է կազմուած լինում: Մի եկեղեցու զանազան մասերը—օրինակ՝ գաւառները, թեմերը, ծխական համայնքները—ունենում են իւրաքանչիւրը իւր սահմանում գործող ժողովներ (օր. թեմական, ծխական): Մեր եկեղեցում գոյութիւն ունեցող օրգաններից ժողովներն են այն միակ հաստատութիւնը, որ կանոնադիր իշխանութիւն ունեցող են համարւում, որովհետև ժողովներն են մեր եկեղեցու կազմակերպութեան կարգում համապատասխան համայնքների գլխակցութեան և կամքի ներկայացուցիչները: Իսկ կանոնատուութեան եղանակը որոշող սկզբունքը, որ մեր եկեղեցում սրբագործուած է բազ-

մադարեան աւանդութեան հեղինակութեամբ՝ այն է, որ եկեղեցու — հետեւապէս՝ եկեղեցու համայնքի — գիտակցութիւնն ու կամքն է նոյն եկեղեցու կարգերի հիմքը և ազդեցութիւնը:

Բացի կանոնական իրաւունքի վերոյիշեալ ազդեցութենէն՝ կայ նաև մի ուրիշը, որ յայտնի է սովորոյթ կամ կանոնական սովորոյթ անունով: Սովորոյթ ասելով եկեղեցական իրաւաբանութեան մէջ հասկանում են այն կանոնները, որ առաջանում, տարածւում և հաստատւում են եկեղեցու համայնքի գիտակցութեան մէջ և կազմում նրա իրաւաճանաչութիւնը: Սովորոյթի կանոնները ծագում են բնական եղանակով առանց որևէ ձևական և պաշտօնական կարգերի: Սովորաբար նրանք անգիր են լինում և մնում, և եթէ երբեմն մասամբ գրի են առնւում՝ այդ՝ սովորոյթի վերաբերմամբ մի երկրորդական և պատահական հանդամանք է համարւում, մինչդեռ ժողովական կանոնները սովորաբար գրաւոր են լինում և գրի են առնւում հենց իրենց ծագման ժամանակ: Սովորոյթի կանոնը համայնքի գիտակցութեան մէջ հիմք դնելուց յետոյ պարտադիր է ճանաչւում և այդ պարտաւորիչ յատկութեան հիմքը կամ ուրիշ խօսքով՝ սովորոյթի կանոնը պարտադիր դարձնող հեղինակութիւնը՝ կանոնի հնութիւնն է հանդիսանում: Սակայն պէտք է գիտենալ, որ թէև սովորոյթի կանոնները սովորաբար հնաւանդ են թւում համայնքի գիտակցութեան և պարտադիր համարւում իրենց վաղեմիութեան շնորհիւ, բայց այդ հնութիւնը, վաղեմիութիւնը իրօք կարող է երբեմն խիստ սահմանաւոր լինել: Մի կանոն, որին ընտելացել է համայնքը և սովորել, նոյն համայնքին խիստ հնաւանդ կը թուի, մինչդեռ իրօք նոյն կանոնը կարող է համեմատաբար շատ նոր ժամանակների ծնունդ լինել: Ներկայումս մեր եկեղեցական իրաւունքում սովորոյթն է, որ գրեթէ տիրող կանոնադրել է հանդիսանում և այս՝ մասամբ մեր եկեղեցական ժողովների կանոնաւոր և մշտական գործունէութեան բացակայութեան պատճառով: Ժողովական կանոնների նման սովորոյթն էլ կարող է ունենալ գոր-

Ժաղրութեան տարբեր շրջաններ, սովորոյթն էլ կարող է լինել ծխական համայնքի, թեմի և վերջապէս՝ համայն եկեղեցու, թէև այն ևս պէտք է նկատել, որ սովորոյթին աւելի յատուկ է տեղական լինելը, և իւրաքանչիւր տեղական համայնք սովորաբար ունենում է իւր տեղական սովորոյթը:

Այսպիսով ներկայում գործող կանոնադիր աղբիւրներն են մեր եկեղեցում՝ եկեղեցական ժողովները եւ կանոնական սովորոյթը:

Եկեղեցու կանոնադիր գործօնները, որ ինչպէս ասացինք, կանոնական իրաւունքի աղբիւրներ են կոչուած՝ սահմանում են այն պարտադիր կարգերը, որոնցով պիտի կարգաւորուին եկեղեցու անդամների կեանքն ու գործունէութիւնը. հետեւապէս՝ սրանք պարտաւոր են գիտենալ այդ կանոնները, որպէսզի դրանցով ղեկավարուին. ուստի անհրաժեշտ են միջոցներ՝ որոնցից ամենքը կարողանային հարկաւոր տեղեկութիւններ և ծանօթութիւն ձեռք բերել այդ կանոնների մասին: Եւ ահա այդ միջոցները եկեղեցական իրաւաբանութեան մէջ կանոնական իրաւունքի աղբիւրներ են կոչուած կամ երբեմն՝ վերևում յիշուած կանոնաղբիւրներից տարբերելու համար՝ ձեւական կամ կանոնական աղբիւրներ:

Քրիստոսադիր և առաքելասահման կանոնների մասին տեղեկանում ենք գրաւոր, ձեւական աղբիւրից, որ է նոր կտակարանը:

Առաքելաւորից դուրս կարգերի մասին տեղեկութիւններ ունինք նաեւ այնպիսի գրաւոր աղբիւրներից, ուր յետագայ ժամանակներում դրի են առնուել առաքելաւորից թէ՛ բերանացի և թէ՛ գործով առաջարկուած և հաստատուած կարգերը, որ յայտնի են առաքելական աւանդութիւն անունով:

Մեր նախկին եկեղեցական ժողովներից սահմանուած կանոնները արձանագրուած և յիշատակուած են կանոնագրքում, Մխիթար վարդապետի Դատաստանադրքում և այլ և այլ մատենագրութիւններում: Նոյն գրաւոր աղբիւր-

ներում՝ կարող ենք տեղեկութիւններ գտնել նաև մեր եկեղեցու անցեալ կանոնական սովորոյթի կարգերի մասին։ Արդի ժողովների կանոնները կը գտնենք ժողովական պաշտօնական արձանագրութիւններում, իսկ արդի սովորոյթին կը ծանօթանանք թէ՛ եկեղեցական ատեանների և օրդանների պաշտօնական գրագրութիւններից, թէ՛ մամուլից և թէ՛ հարցուփորձի միջոցով։

Այս բոլոր ձևական աղբիւրների մատակարարած նիւթը պէտք է ուսումնասիրուի իրաւաբանօրէն, զտուի, մշակուի, որպէս զի հայոց եկեղեցու կանոնական իրաւունքը պարզորոշ ձև ստանայ և կարողանայ պատշաճաւոր կերպով գործադրուիլ՝ մեր եկեղեցու կեանքը կարգաւորելու համար։ Այդ ուսումնասիրութիւնը հայոց եկեղեցական իրաւաբանութեան գործն է։

Սիրական Տիգրանեան



Հայոց ժամակարգութիւնները հինգերորդ դարում.

ժամագրքի բարգմանութիւն. ժամակարգութիւն.

Գիրք Աղօթից. Աղօթամատոյց եւ ժամագիրք։

Չորրորդ դարում, մեր քաղաքական իշխանութեան ժամանակ, երբ դեռ Հայոց լեզուով ու գրով գրել կարդալ չկար, — «Զի յայնժամ գիր . . . Հայոց չեւ ևս էր լեալ» (Խոր. Գ. լզ.), և Հայոցս աշխարհի մի մասին այն ինչ տիրում էր Պարսիկը, իսկ միւս մասին հզօր Յոյնը (Կորիւն. Խոր. Գ. խբ.), այն մասը, որ գտնւում էր Յունաց բաժնի վերայ և վիճակուած էր Կեսարիայի մեծ աթոռին, նոցա մանուկները կը թւում, մարդու՛մ էին «Յունական դպրութեամբ և ոչ Ասորւով» (Խոր. Գ. ծղ.), և հետեւապէս այս բաժնի հայերը կատարում էին իրենց ժամակարգութիւնները Յունարէն լեզուով, — «Յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգ» (Խոր. Գ. լզ.):